# ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**(ծննդյան 100-ամյակին)**

2008թ. մայիսին լրացավ բազմավաստակ երկրաբան, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պետրոգրաֆիայի և միներալոգիայի բաժնի (1948-1976թթ.), այնուհետև՝ իզոտոպային երկրաբանության լաբորատորիայի (1976-1994թթ.) վարիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Գևորգ Բաղդասարյանի ծննդյան 100-ամյակը:

1927թ. նա ընդունվեց Երևանի Պետական համալսարանի քիմիական ֆակուլտետ, որն ավարտեց 1931թ.: Արդեն ուսանողական տարիներին նա սկսեց աշխատել ճանաչված երկրաբան Պ.Ղամբարյանի մոտ, որը ղեկավարում էր ՍՍՀՄ ԳԱ Կովկասյան արշավախմբի Երևանյան ջոկատը:

1938թ. ասպիրանտուրա ընդունվելուց հետո, Գ. Բաղդասարյանի գիտական գործունեությունը մինչև իր կյանքի վերջին օրերը (16.01.1998թ.), կապված է եղել ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ: Այստեղ, տարբեր տարիների, նա զբաղեցրել է ավագ գիտական աշխատողի, ինստիտուտի գիտական քարտուղարի, պետրոգրաֆիայի և միներալոգիայի բաժնի վարիչի, երկրաժամանակագրության և իզոտոպային հետազոտությունների լաբորատորիայի վարիչի, առաջատար գիտական աշխատողի պաշտոններ:

Գևորգ Բաղդասարյանի գիտական հետազոտությունների լայն շրջանակներում առանձնանում են տարբեր հասակի մագմատիկ զանգվածներին նվիրված խնդիրների բազմակողմանի ուսումնասիրությունները: Մասնավորապես՝ հարկ է նշել Փամբակի լեռնաշղթայի Թեժսարի ալկալային զանգվածի մանրակրկիտ երկրաբանական և պետրոգրաֆիական հետազոտությունները, որոնք նրա թեկնածուական ատենախոսության հիմքը հանդիսացան: Այն հաջողությամբ պաշտպանվեց Մոսկվայում 1951թ.:

Գևորգ Բաղդասարյանը, շուրջ 60 տարի անընդմեջ աշխատելով ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ում, մեծ ավանդ ունեցավ երկրաբանական հետազոտությունների նոր ուղղությունների զարգացման, 60-70-ական թվականներին համահունչ գիտական մակարդակի բարձրացման, մեզո-կայնոզոյան հասակի հրաբխածին, ինտրուզիվ և մետամորֆային գոյացումների ուսումնասիրման գործում:

Գևորգ Բաղդասարյանի գործունեությանը բնորոշ էր նորի զգացումը: Նրա ջանքերով ԵԳԻ-ում 1960թ. հիմնադրվեց իզոտոպային լաբորատորիան, որը հետագայում դասվեց նախկին ԽՍՀՄ և արտասահմանյան մի շարք երկրների նույն բնագավառի ճանաչված կենտրոնների շարքում: Գևորգ Բաղդասարյանի ղեկավարությամբ իզոտոպային երկրաբանության բնագավառում կատարված հետազոտությունների արդյունքները (K-Ar, Rb-Sr, $\delta^{18}O$, $\delta^{13}C$) թույլ տվեցին բնորոշել Հայաստանի տարածքի մագմատիկական և մետամորֆային կոմպլեքսների գերակշռող մասի իզոտոպային հասակը, պարզաբանել ապար- և հանքառաջացման մի շարք կարևոր հարցեր: Միևնույն ժամանակ, միջազգային համագործակցության շրջանակներում, իրականացվեցին Չեխոսլովակիայի, ԳԴՀ, Հունգարիայի, Ռումինիայի, Ավստրիայի, ԱՄՆ-ի տարաբնույթ առաջացումների իզոտոպային ժամանակագրության խնդիրներին նվիրված հետազոտություններ, որոնք ամփոփվեցին արտասահմանում տպագրված շուրջ 40 գիտական հոդվածներում:

Գևորգ Բաղդասարյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ հրատարակվեցին նաև Հայաստանի տարածքի ինտրուզիվ, հրաբխածին և մետամորֆային գոյացումներին նվիրված մի շարք ամփոփիչ աշխատություններ:

Գևորգ Բաղդասարյանը իր գործունեության ընթացքում լուրջ ուշադրություն էր դարձնում նաև կիրառական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Թեժսարի նեֆելինային սիենիտները նրա կողմից առաջ քաշվեցին որպես հեռանկարային հանքահումքային բազա՝ Հայաստանում ալյումինի արտադրության համար. Կոտայքի մարզում նա հայտնաբերեց դոլոմիտների խոշոր հանքավայր, ուսումնասիրեց և առաջ քաշեց հետախուզման համար կրաքարերի, տրավերտինների, մարմարների, հանքային ջրերի մի շարք հեռանկարային հանքավայրեր:

1951-1953թթ. նրա ղեկավարած ԵԳԻ և Շինանյութերի ինստիտուտի արշավախումբը Սարատովի մարզում հայտնաբերեց կվարցիտանման ավազաքարերի խոշոր հանքավայր, որը հանձնվեց հետախուզման՝ Վոլգայի հիդրոտեխնիկական կառույցների շինարարության ընթացքում օգտագործելու նպատակով:

Գևորգ Բաղդասարյանը հանդիսանում էր միջազգային և համամիութենական մի շարք հանձնաժողովների և աշխատանքային խմբերի անդամ: Նա հեղինակ է շուրջ 180 գիտական աշխատանքների, այդ թվում՝ 10 մենագրությունների, որոնք հրատարակվել են Հայաստանի, նախկին ԽՍՀՄ և արտասահմանյան գիտական մամուլում և ներկայացվել են XXI, XXII և XXIV Միջազգային երկրաբանական կոնգրեսներում:

Գևորգ Բաղդասարյանի գիտական գործունեությունը մշտապես ուղեկցվում էր երիտասարդ մասնագետների պատրաստմամբ: Նրա ջանքերով և գիտական հեղինակության շնորհիվ Ինստիտուտը համալրվեց երիտասարդ կադրերով, որոնք ասպիրանտական կրթություն ստացան ճանաչված գիտական կենտրոններում և հետագայում նվիրումով շարունակեցին գիտական հետազոտությունները Հայաստանի տարբեր մարզերում:

Գևորգ Բաղդասարյանը Հայրենական Մեծ պատերազմի մասնակից էր, պարգևատրված էր մի շարք մարտական շքանշաններով և մեդալներով: Հետագայում նրա երկարամյա, անբասիր աշխատանքը նույնպես գնահատվել է պետական պարգևներով և գովեստագրերով:

Գևորգ Բաղդասարյանի բազմաթիվ գործընկերները և աշակերտները նրա ծննդյան 100-ամյակի առթիվ իրենց հարգանքի տուրքն են մատուցում նրա հիշատակին:

ՀՀ ԳԱԱ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ»
ՀՀ ԳԱԱ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ